

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**№ 20/08**

**Քաղ. Երևան**

**29 հուլիսի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ.Վարդանյան, Գ.Յ.Ադամյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. հուլիսի 29-ի նիստում (արձանագրություն № 63/4) քննարկեց REEMTSMA Cigarettenfabriken (DE) ընկերության ներկայացուցիչ ՋՋ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի 2008թ. հունիսի 9-ի դիմումը՝ Phillip Morris Products S.A.(CH) ընկերության անունով գրանցված «Prima» IR 587642 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱՃՄԴ-ի 34-րդ դասի ապրանքների նկատմամբ վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ REEMTSMA Cigarettenfabriken (DE) ընկերությանը հայտնի է դարձել, որ Phillip Morris Products S.A.(CH) ընկերության անունով գրանցված «Prima» IR 587642 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանը, որը գրանցված է 34-րդ դասի ապրանքների համար, չի օգտագործվել և չի օգտագործվում Հայաստանի Հանրապետության տարածքում:

Ելնելով դրանից և հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՋՋ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի «Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն անընդհատորեն (ընդհանրապես) չի օգտագործվել ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ օրենքի 26 հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից», դիմողը խնդրել է «Prima» IR587642 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել գրանցված ԱՃՄԴ-ի 34-րդ դասի բոլոր ապրանքների համար:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն 12.06.08թ. հետձանուցմամբ փոստային առաքմամբ տեղեկացրել է «Prima» IR 587642 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանի սեփականատեր Phillip Morris Products S.A.(CH) (Quai Jeanrenaud 3 CH-2000 Neuchâtel, Switzerland) ընկերությանը ինչպես նաև դրա ներկայացուցիչ՝ Bovard SA (Optingenstrasse 16 CH-3000 Berne 25, Switzerland) ընկերությանը բողոքարկման խորհրդի կողմից 2008թ. հունիսի 9-ին ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2008թ. հուլիսի 29), ՀՀ արտոնագրային հավատարմատարի միջոցով դիմումի վերաբերյալ իր նկատառումները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու մասին:

Ըստ գործակալությունում ստացված հետձանուցումների, հասցեատերերի կողմից ծանուցումները ստացվել են 18.06.08թ., սակայն 2008թ. հուլիսի 29-ի բողոքարկման խորհրդի նիստին սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, ինչպես նաև սեփականատիրոջից որևէ գրավոր արձագանք բողոքարկման խորհուրդը չի ստացել:

Դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը, ինչպես նաև հաշվի առնելով նիստում դիմումի ըստ էության քննարկման արդյունքները և այն փաստը, որ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերության համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները պետք է ներկայացնի դրա սեփականատերը, տվյալ դեպքում՝ Phillip Morris Products S.A.(CH) ընկերությունը, որի պատշաճ ծանուցելու հնարավորությունները սպառված են, սակայն ապրանքային նշանը ՀՀ-ում օգտագործելու վերաբերյալ որևէ փաստ, ապացույց կամ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից այդպես էլ չի ներկայացվել, որից կարելի է եզրակացնել, որ այդ ընկերությունը «Prima» IR587642 ապրանքային նշանը չի օգտագործել Հայաստանում, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ ապրանքային նշանը չօգտագործելու վերաբերյալ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, և դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «ա» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել REEMTSMA Cigarettenfabriken (DE) ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի դիմումը ամբողջովին և Phillip Morris Products S.A.(CH) ընկերության անունով գրանցված «Prima» IR587642 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված ԱՃՄԴ-ի 34-րդ դասի բոլոր ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի

Նախագահ

Ա.Ազիզյան